Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄՅԱՆ, Հովհաննես Պատկերահան (1695—1758), Վենետիկ, Ս. Ղազար, 1987, 61 էջ։

Լույս տեսավ «Հայագիտական մատենադարան «Բազմավեպ» շարքի հերթական՝ 24-րդ գիրքը։ Հայագիտության առաջնակ և հնագույն օջախ Վենետիկի Մխիթարյան միաբանությունն իր ամենատեսակ հայկական պարբերականի՝ «Բազմավեպի» էջերում վերջին տասնհինգ տարիներին (1972 թ. սկսած) տպագրված առավել ծավալուն և շարունակական հրապարակումներն ու հոդվածներն առանձին գրքերի ձևով տպագրելով, ստեղծում է Վիեննայի Մխիթարյան միաբանության «Ազգային մատենադարան» շարքին նմանվող երկրորդ մատենաշարը։ Վենետիկի Մխիթարյանների ներկա աննպաստ տնտեսական կացության պայմաններում քանչորս գիրքը դիտական փոքր արտադրանք չէ. այն հայաբարն է միաբանության տոկունության և առհավատյան այն հավատի, որ մեծ Սեբաստացու ժառանգորդները շատ շուտով թոթափելու են այժմյան դժվարությունները և վերականգնելու միաբանության ալիշանյան օրերի գիտական հեղինակությունը, համբավն ու փայլը։

Գրախոսվող գիրքը նվիրված է XVIII դ. առաջին կեսին ապրած մի նկարչի, «որու մասին ոչինչ գրուած չ». Մխիթար Սեբաստացուն և նրա ստեղծած միաբանության պատմության սկզբնական շրջանին վերաբերող ուսումնասիրությունների մեջ երբեմն հիշատակվում է այդ նկարչի միայն անունը։ Այժմ, հիմնվելով նկարչի՝ վանքի դիվանում պահպանված կենսագրության և հիմնականում մեծ հիմնադրին ուղղված նրա «հարիւրի չափ» նամակների վրա, Ս. Ճեմ-ճեմյանը վերարտադրել է Հովհաննես Պատկերահանի կյանքի ուղին, կազմել նույն աղբյուրներից իրեն հայտնի դարձած՝ նրա «գծած պատկերների» ցանկը, հրատարակել այդ պատկերներից երկուսը, հիշյալ կենսագրությունը և նկարչի տապանագիրը։

Հովհաննես Պատկերահանը ծնվել է Կեսարիայում՝ 1695 թ. հայ մորից և մահմեդական հորից. չորսամյա տարիքում զրկվելով հորից, գտնվել է մորաքրոջ և նրա վաճառական ամուսնու խնամքի տակ, նրանց հետ տեղափոխվել է Հալեպ, այստեղ գաղտնի մկրտվել և, մահմեդական անունը մոռանալով, ստացել Հովհաննես անունը։ Քրիստոնյաների մեջ քրիստոնյա և մահմեդականների մեջ մահմեդական լինելու երկակի վիճակը երկար շարունակվել չէր կարող, ուստի ապագա նկարիչը Հալեպից անցավ Տրիպոլի, ապա՝ Բեյրութ, Մարսել և, ի վերջո, Հռոմ, որտեղ դարձավ պապական պալատի հսկիչ զինվոր։ Ստացած վարձատրության մի մասը նա հատկացրեց իր ուսումնառությանը և սկսեց հմտանալ մանկուց սիրած նկարչության արվեստում։ Կյանքի բերումով Հովհաննես Պատկերահանը սերտ կապեր է ստեղծել Ալբանոյում (Հռոմի մոտ) հաստատված «Հիսուսի և Մարիամի նվիրյալ քույրեր» միաբանության և նրա հիմնադրուհի Մարիամ Մաշիորիի հետ, իսկ 1718 թ. Հռոմում ծանոթացել է Մխիթար Սեբաստացու հետ և որդիական սիրով ցկյանս կապվել նրա ու նրա միաբանության հետ։ Ամբողջ կյանքը գինվորության մեջ անցկացնելով հանդերձ, նա միշտ զբաղվել է սիրած գործով՝ սրբապատկերներ է նկարել հիմնականում Մխիթարյան վանքի և իտալացի կույսերի հիշյալ մենաստանի համար։

Մի օր, անկասկած, երբ ուշ միջնադարի հայ մանրանկարչության և գեղանկարչության պատմության ամբողջացման համար անհրաժեշտ լինի ուսումնասիրել հայ արվեստի վրա եվրոպական գեղանկարչության ազդեցությունը, հնարավոր կլինի Ս. Ղազարի և Ալբանոյի կուսաստանի բազմաթիվ նկարների մեջ գտնել Հովհաննես Պատկերահանի նոր նկարներ, դրանց մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո փորձել պարզել նկարչի իտալացի ուսուցչի անունը, բացառված չէ նաև վաճառելու համար պատրաստված նկարների հայտնաբերումը։ Իսկ այս ամենից հետո հնարավոր է նաև որևէ փոքրիկ ալբոմով այդ բոլոր նկարների հրատարակության հեռանկարը, որովհետև Հովհաննես Պատկերահանը և XVII—XVIII դարերի շատ այլ նկարիչներ ու մանրանկարիչներ, որոնք մեծ մասամբ կրել են իրենց ժամանակի եվրոպական (հատկապես՝ իտալական) արվեստի խոր ազդեցությունը, ներկայացնում են հայ գեղանկարչության այն շրջանը, որ հին՝ գրքային կամ մանրանկարչական փուլը կապում է նոր ժամանակների հայկական հաստոցային գեղանկարչության շրջանի հետ։

Սակայն սա հայ արվեստաբանների հետագա անելիքներից է, ուստի չի կարելի աղբյուրագետ-բանասեր Ս. Ճեմճեմյանին կշտամբել այն բանի համար, որ նա չի ծանրացել Հովհաննես Պատկերահանի արվեստի հարցերի լուծման վրա և նկարչին ներկայացրել է առավելապես

իբրև գործիչ։ 1741 թ. մինչև մահ՝ 1758 թ., Հովհաննես Պատկերահանը վարում էր Հռոմի հայոց Ս. Վլաս հյուրանոցի և Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու մատակարարի պաշտոնը, դրա շնորհիվ էլ սերտ հարաբերություններ ուներ Վատիկանի կարդինալների, բարձրաստիճան զանազան եկեղեցականների, XVIII դ. կեսերին Հռոմ այցելած բազմաթիվ հայ եկեղեցական և հասարակական գործիչների հետ (Աբրահամ-Պետրոս Արծիվյան կաթողիկոս, Սարգիս արք. Սարաֆյան, Վրթանես արք. Կեսարիո, Սուքիաս եպս., Հակոբոս-Մեսրոպ եպս. Արապյան, Ղազար եպս. Անմարմին, Աթանաս եպս. Տայի-Սիմոնյան, նաև՝ Դավիթ Բեկի հերոսական ազատագրական պատերազմի գործուն մասնակից Տեր-Ավետիս քահանա և այլն), որոնց մասին Հովհաննես Պատկերահանը եզակի տեղեկություններ է գրանցել Մխիթար աբբահորը և նրա հետևորդներին ուղարկած իր վերոհիշյալ «հարիւրի չափ» նամակների մեջ։ Վերջիններիս «գիրը խեղճ է, շարադրանքը տկար, սակայն պարունակության տեսակետով՝ գերազանցորեն հարուստ», դրանք «կուտան մեզի Հռոմի հայոց կյանքի պատմությունը՝ իր բոլոր անկյունադարձներով», որովհետև դրանց հեղինակը «գրեթե օրագրության մը ձևով կպատմե եղելությունները, որոնք կպատահեին հայ տուներն ներս»։ Ս. Ճեմճեմյանն իր հեղինակի նամակների արժեքավորումն ավարտում է հետևյալ խոսքով. «Այս բոլորը պետք է գնահատել խորապես, մանավանդ երբ դիտենք, թե գրողը հարցերուն կմոտենա զուտ առարկայական կերպով, դնելով մեր դիմաց եղելությունները՝ ինչպես որ են» (էջ 22—23)։

Կարծում ենք, որ Պատկերահանի նամակների այդ անուրանալի արժեքն ու կարևորությունը նկատի ունենալով, Ս. Ճեմճեմյանը պետք է նրա կենսագործունեության նվիրված իր գրքի հետ հրատարակեր բոլոր նամակները, մանրամասն ծանոթագրելով և բացատրելով հեղինակի օգտագործած բազմաթիվ փոխառյալ ու օտար բառերը։ Աշխատասիրողն այդ նամակներն օգտագործել է այլ հարցերի վերաբերող իր ուսումնասիրությունների մեջ (տե՛ս էջ 14, 23), ուստի հույս ունենք, որ որպես գրախոսվող գրքի երկրորդ մաս, նա շուտով կհրատարակի նաև Հովհաննես Պատկերահանի նամակներն և դրանով մեծ դյուրություն կընծայի XVIII դ. հայոց պատմության տարբեր հարցերի հետազոտողներին։ Նույն գրքի մեջ արժե հրատարակել նաև Պատկերահանի պատմածի հիման վրա Մատթեոս վ. Եվդոկիացու գրառած (նկարչի կենսագրության գրառողը նույնպես նա էր) «Պամութիւն Ալպանեցւոյ կուսի միոյ, որ կոչի Մարիամ Մաճօռ» փոքրածավալ վարքը, որը Ալբանոյի կուսաստանի հիմնադրուհու և հիմնադրության մասին միակ վավերագիրը լինելուց զատ, XVIII դ. հայ-իտալական գրական և պատմական առնչությունների կարևոր և ինքնատիպ փաստաթուղթ է։ Անդրադառնանք Սահակ վ. Ճեմճեմյանի գիտական վաստակին։

«Բազմավեպ» վերջին 23 տարվա (1966—1987) համարներում նրա ստորագրությամբ հրատարակվել է 35 անուն հոդված (ուսումնասիրություններ, բնագրերի հրապարակումներ, գրախոսականներ և այլն), գրախոսվող գրքից բացի «Բազմավեպի» շարքում տպագրվել են Ս. Ճեմճեմյանի ևս 9 գիրք.

1. Հ. Ներսէս Սարգիսեանի ուղևորությունը դէպի Փոքր և Մեծ Հայք (1843—1853), 1974, 94 էջ։
2. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թուի (Ցառաջաբան, Բնագիր, Խմբագիր օրինակ և ծանոթագրություններ), 1977, 182 էջ։
3. Հ. Ղևոնդ Ալիշան, Տեսուչ Փարիզի Մուրատեան վարժարանի, 1980, 102 էջ։
4. Մխիթար աբբահօր հրատարակչական առաքելությունը, 1980, 352 էջ։
5. Հայ քարտիսագիտութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԸ դարուն, 1981, 59 էջ, 14 քարտէս։
6. Հ. Միքայէլ Չամչեան և իր Հայոց պատմությունը, 1983, 69 էջ։
7. Գէորգ դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) և Մխիթարեանները, 1984, 144 էջ։
8. Նոր նիւթեր Սարգիս արքեպս. Սարաֆեանի մասին, 1985, 160 էջ։
9. Մարսիլիոյ հայկական տպարանը, 1986, 65 էջ.

Ս. Ճեմճեմյանը կազմել է նաև իր միաբանության մատենադարանի ձեռագրական ընտիր հավաքածուի մանրամասն, դիտական ցուցակի հերթական՝ 4-րդ հատորը (այստեղ նկարագրված են Շարակնոց, Ճաշոց և Ժամագիրք ծիսական ժողովածուները՝ Ս. Ղազարի մատենադարանի ձեռագրացուցակը կազմվում է առարկայական սկզբունքով), որը դեռևս անտիպ է և որի շուտափույթ հրատարակությունը հայագիտության, մանավանդ հայ ձեռագրագիտության և աղբյուրագիտության առաջնահերթ ու հրատապ խնդիրներից է։

Գիտական գործունեության սկզբնական շրջանում Ս. Ճեմճեմյանի զբաղմունքի հիմնական նյութը Մաշտոց, Շարակնոց և Ճաշոց ժողովածուներն էին։ Նույն տարիներին նա հրատարակեց նաև Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» երկը, վերջնականապես լուծելով այդ

կարևոր պատմական աշխատության բնագրագիտական բոլոր խնդիրները։ Հետագայում Ս. Ճեմճեմյանի ուշադրությունը բևեռվեց Ս. Ղազարի հարուստ դիվանի արժեքավոր նյութերի ուսումնասիրման կարևոր խնդրի վրա. նրա աշխատությունների մեծ մասը գրված է այս դիվանի փաստաթղթերի հիման վրա։ Վերջին շրջանում Ս. Ճեմճեմյանի ուսումնասիրությունները հենվում են մի այլ՝ հայագիտական արժեքի խմաստով բավական հարուստ դիվանի՝ Հռոմի Հավատասփյուռի (Պրոպագանդա ֆիդեի) բազմաբովանդակ փաստաթղթերի վրա։ Առավելապես որոնց շնորհիվ են գրվել «Մարսիլիոյ հայկական տպարանը» և «Հայ տպագրությունը և Հռոմ» («Բազմավեպ», 1956, էջ 92—143, 1987, էջ 78—111) ուսումնասիրությունները։ Հավատասփյուռի դիվանն անմատչելի է հայագետների (հատկապես՝ հայաստանարնակ) մեծ մասի համար, ուստի ուրախությամբ արձանագրելով, որ մեր հեղինակն այստեղից քաղել է XVIII դ. վերաբերող՝ հայագիտական արժեք ունեցող մի քանի հազար փաստաթղթերի նյութը, հույս ունենանք, որ նրա՝ որպես կանոն փաստալից ուսումնասիրությունների մեծ մասն ապագայում նվիրված կլինի այդ փաստաթղթերի բովանդակության հետազոտմանն ու պարզաբանմանը։

Վերջում ցանկանում ենք Ս. վ. Ճեմճեմյանի ուշադրությունը հրավիրել երկու հանգամանքի վրա. «Բազմավեպի» մատենաշարի սկզբնավորումից առաջ հրատարակվել է նրա «Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ—Կանոն մկրտութեան» («Բազմավեպ», 1971, էջ 25—46, 1972, էջ 183—231, 381—419) ուսումնասիրությունը։ Քանի որ վերջին տարիներին հայ ծիսարանի (Մաշտոց) և ընդհանրապես ծիսագիտության նկատմամբ հետաքրքրությունը բավական մեծացել է, ուստի հանդեսի տարբեր տարիների տարբեր համարների՝ զանազան էջերում մասնատված այդ ուսումնասիրությունն ու բնագիրն արժեր ունենալ ամբողջացված՝ մի գրքի մեջ։ Ըստ այդմ, առաջարկում ենք Ս. Ղազարի տպարանի համար լիովին դյուրին՝ օֆսեթ եղանակով վերարտադրել «Բազմավեպի» հիշյալ էջերը և նույն մատենաշարով այդ գործը լույս ընծայել առանձին գրքով. այսպիսի հրատարակության գոյությունը կնպաստի մեր օրերի ծիսագիտական ուսումնասիրություններին։ Երկրորդ առաջարկը վերաբերում է Մխիթարյան դիվանին. Ս. Ճեմճեմյանի հետազոտություններից երևում է, որ դրանք պատրաստվում են վանքի դիվանի կարգավորմանը և մշակմանը զուգահեռ։ Նրա գրքերի տողատակերի հղումներից երևում է, որ փաստաթղթերի կարգավորումը կատարվում է հեղինակային-ժամանակագրական սկզբունքով. օրինակ՝ «Հ. Յակոբոս Ջամչեան Պոլիսէն, 12 Փետր. 1761-ին, առ Հ. Վրթանէս Ասկէրեան, Վենետիկ» (Հ. Միքայէլ Ջամչեան և իր Հայոց պատմութիւնը, էջ 15)։ Կարգավորման և հղումների այսպիսի սկզբունքի դեպքում անհրաժեշտ փաստաթուղթ գտնելու համար պետք կլինեն լրացուցիչ գիտելիքներ, որ կարող են ունենալ միայն Ս. Ղազարի միաբանները, այդ պատճառով էլ, մեր համոզմամբ, նախընտրելի է Մխիթարյան դիվանը ժամանակից սկզբունքով կարգավորելը և փաստաթղթերն էլ նույն սկզբունքով հղելը։ Օրինակ. «Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 6, վավերագիր 53». այսպիսի հղումով փաստաթուղթ գտնելը դժվար չի լինի։ Այս տեսակետից էլ առաջարկում ենք Ս. Ղազարի դիվանի բոլոր փաստաթղթերը բաժանել ըստ թղթապանակների և համարակալել թե՛ վավերագրերը և թե՛ թղթապանակները։ Փաստաթղթերի համարագրումը կարելի է անել և ըստ առանձին թղթապանակների, և՝ բոլոր թղթապանակների համար միասնական, այսպես. առաջին թղթապանակի մեջ տեղավորված են 1—540 վավերագրերը, երկրորդի մեջ՝ 541—960 և այսպես շարունակ։ Միաժամանակ, վավերագրերի ներկա դասավորությունը, որ արդեն արտահայտված է բազմաթիվ աշխատությունների մեջ, կարելի է թողնել անփոփոխ։ Ի վերջո, Ս. Ղազարի դիվանի կարգավորման ավարտից հետո անպայման արժե հրատարակել նրա թեկուզ համառոտ մի ուղեցույց, որովհետև այնտեղ ամբարված տասնյակ հազարավոր փաստաթղթերը պարունակում են XVIII—XX դդ. մեր մշակույթին և ընդհանրապես պատմությանը վերաբերող անգնահատելի տեղեկություններ, որոնք պետք է աստիճանաբար դարձվեն գիտական լայն շրջանների սեփականությունը։

Սահակ Ճեմճեմյանի վաստակն անվերապահորեն արժանի է բարձր գնահատականի։ Նրա աշխատություններն ունեն որոշակի ուղղվածություն և գրեթե միշտ վերաբերում են հեղինակի նախասիրած որևէ ընդգրկուն գիտական խնդրի։ Այս հանգամանքը թույլ է տալիս հուսալ և ցանկանալ, որ Ս. Ճեմճեմյանը մոտ ապագայում կպատրաստի երկու կարևորագույն աշխատություն ևս. առաջինը, մեր կարծիքով, XVII դ. ընթացքում Հռոմի և պապականության հետ հայոց ունեցած հարաբերությունների ամբողջական պատմությունն է, երկրորդը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության ժամանակագրական մանրամասն պատմությունը։

ՅՈՒ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու